

ՍԱՏՐԱՊԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԵՐՔԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ԱՆԻ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

ՇՊՀ-ի ավագ դպրոցի ուսուցիչ, ՇՊՀ-ի հայցորդ

Բանալի բառեր. սատրապական Հայաստան, կառավարման ներքին համակարգ, տնտեսական զարգացվածություն, ներքին ինքնուրույնություն

Մ.թ.ա. 6-րդ դարի 70-ական թթ. Հայկական լեռնաշխարհում հիմնադրվում է Հայկազուն-Երվանդունիների համահայկական թագավորությունը: Թագավորական և, Աքեմենյան տիրապետությունից սկսած, սատրապական այս տոհմը իշխել է մինչև մ. թ. ա. 2-րդ դարը: Հիշյալ ժամանակաշրջանի մասին պահպանված գրավոր աղբյուրները և նյութական մշակույթի հուշարձանները սահմանափակ են, շատ դեպքերում՝ հակասական: Մ. Խորենացու «Հայոց պատմություն»-ից տեղեկանում ենք, որ Երվանդ Ա Սակավակյացը և նրա գահաժառանգ Տիգրանը եղել են Մարաց թագավոր Աժդահակի ժամանակակիցները: Այս տեղեկությունը հաստատում է նաև հույն պատմիչ Քսենոփոնը: Մ.թ.ա. 6-րդ դարի կեսերին Հայկազուն-Երվանդունիների թագավորությունը, բախվելով Մերձավոր Արևելքում հզորագույն ուժ դարձած մարապարսկական տերությանը, հարկադրված էր ճանաչել նրա գերիշխանությունը: Բայց սա ամենևին չէր նշանակում պետական անկախության կորուստ. Հայկազուն-Երվանդունիներին հաջողվեց պահպանել պետական անկախությունը, տարածքային ամբողջականությունը՝ ստեղծելով բոլոր նպաստավոր պայմանները տնտեսության, մշակույթի, քաղաքական ու ռազմական համակարգերի զարգացման համար: Հայկազուն-Երվանդունիների թագավորության առաջացման ժամանակաշրջանը համընկավ Մերձավոր Արևելքում խոշորագույն աշխարհաքաղաքական փոփոխությունների հետ:

Պատմության թատերաբեմում հայտնվեց պարսից թագավոր Կյուրոս Մեծը, որը երեք տարվա կռիվներից հետո գրավեց Եկբատանա մայրաքաղաքը և մարական գերիշխանության տակ գտնվող երկրները, այդ թվում՝ Հայաստանը, ճանաչեցին Կյուրոս Մեծի գերիշխանությունը: Քսենոփոնի «Կյուրոպեդիա»-ից տեղեկանում ենք, որ Հայաստանը պարտավոր էր որպես դաշնակից և վասալ Կյուրոս Մեծին վճարել տուրք և զորք¹: Մ. թ. ա. 530 թ. Աքեմենյան արքա դարձավ Կամբյուսեսը², որին հաջողվեց նվաճել Եգիպտոսը: Նրա բացակայության ժամանակ՝ մ. թ. ա. 522 թ. մոգ Գաումատան

¹ Մանանդյան Ա., Երկեր Ա, Երևան, 1977, էջ 52:

² Дандамаев М, Луконин В., Культура и экономика Древнего Ирана, М., 1980, стр.105.

իրեն հռչակեց Պարսկաստանի թագավոր³ ներկայանալով որպես Կյուրոսի որդի: Պարսկաստան շտապող Կամբյուսեսը ճանապարհին հանկարծակի մահանում է: Գաումատայի սպանությունից հետո դավադիրներից մեկը՝ Պարթևաստանի կուսակալ Վշտասպի որդի Դարեհ Ա Մեծը (մ. թ. ա. 522-486 թթ.) 28 տարեկան հասակում հռչակվում է արքայից արքա: Դարեհ Ա-ն կատարում է մի շարք վարչատնտեսական վերափոխումներ, որոնք հնարավորություն տվեցին ստեղծելու պետական կառավարման կայուն համակարգ, նվաճված երկրների նկատմամբ հսկողություն սահմանելու հուսալի լծակներ և կարգավորեցին հարկահավաքման գործը: Նա ողջ պետության տարածքը բաժանեց 20 սատրապությունների⁴, որոնցից 13-րդ-ն⁵ ընդգրկում էր ամբողջ Հայկական լեռնաշխարհը, Եփրատից արևմուտք ընկած տարածքները՝ Պակտյուիկեն (Մաժակ-Կեսարիա) և այստեղից հյուսիս՝ Թերմոդոնտ գետի և Յասոնի հրվանդանի միջև ընկած տարածքը՝ դուրս գալով Սև ծով⁶: Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանման համակարգի հիմքում դրված էր տարբեր ժողովուրդների միավորումով մեկ ամբողջություն միություն, ստեղծելու գաղափարը⁷: Այսինքն՝ բոլոր այն տարածքները, որոնք Դարեհ Ա-ի կառավարումից առաջ մեծամասամբ անկախ ու ինքնուրույն էին, ենթարկվեցին պետական ու վարչական վերակազմության: Ամբողջ կայսրությունը միավորվեց 20 և ավելի սատրապությունների մեջ: Յուրաքանչյուր սատրապություն կառավարվում էր մարզային կառավարչի կամ սատրապի կողմից⁸ (հին պարսկերենով խշաթրապանա), որոնք նշանակվում էին արքայի կողմից և օժտված էին լայն իշխանությամբ: Սատրապները պատասխանատու էին սատրապության կառավարման, դատավարության, հարկահավաքման համար, հատում էին դրամներ⁹, ավելի ուշ

³ Գաումատայի կամ կեղծ Բարիդայի գործունեության մասին տե՛ս Olmstead A. T., History of the Persian Empire, Chicago, 1948; Дьяконов И. М., История Мидии от древнейших времен до конца IV в. до н. э., Москва-Ленинград, 1965.

⁴ Իրականության մեջ գոյություն է ունեցել նաև ավելի ուշ ձևավորված 21-րդ սատրապությունը, որը սեպագիր արձանագրություններում արտացոլված է Սկուդրա, «անդրծովյան սկյութներ» և «վահանակիր հույներ» աշխարհագրական անունների տակ: Տե՛ս Խորիկյան Հ., Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումների շուրջ, Երևան, 2010, էջ 45:

⁵ Խորիկյան Հ., Սատրապական Հայաստանի արևմտյան և հարավային սահմանները մ.թ.ա. VI-IV դարերում, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2005, 3, էջ 173:

⁶ Մանրամասն տե՛ս Խորիկյան Հ., Հայաստանը և Այսրկովկասը Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումներում, Երևան, 2014, էջ 79-80:

⁷ Խորիկյան Հ., Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումների շուրջ, էջ 48:

⁸ Bocchierian S., The Achaemenid Satrapy of Armenia, University of Colorado, Boulder, 2016, p. 4.

⁹ Սատրապը իրավունք ուներ իր սատրապության համար արծաթ և պղինձ դրամներ հատել, մինչդեռ ամբողջ տերության համար ոսկի դրամ հատելու իրավունքը

առաջնորդում էին նաև սատրապական զորքերը: Ըստ երևույթին, յուրաքանչյուր սատրապություն ուներ իր կառավարման և ներքին կյանքի առանձնահատկությունները: Ինչպես նշվեց, Չայաստանը ընդգրկված էր 13-րդ սատրապության մեջ: Սատրապական Չայաստանի կառավարման ներքին համակարգի, վարչական ապարատի, ռազմական ու սոցիալ-տնտեսական կյանքի կազմակերպման տեսանկյունից կարևորագույն նշանակություն ունեն Աքեմենյան արքաների սեպագիր արձանագրությունները, մասնավորապես, Դարեհ Ա-ի Բեհիսթունյան արձանագրությունը: Այս տեսանկյունից անգնահատելի է հունահռոմեական անտիկ մատենագրությունը:

Կարևոր է նկատել, որ պարսից արքունիքի համար Չայաստանի նշանակությունն այնքան զգալի է եղել, որ վերջինս չէր միավորվել VIII-XI սատրապությունների հետ վարչական վերակազմության նույն փուլում¹⁰: Չայաստանի կարևոր լինելու փաստը հաստատում են Բեհիսթունյան եռալեզու արձանագրությունը, Պերսեպոլիսի ապադանայի բարձրաքանդակները, Նաղշե-Ռոստամի տվյալները, Սուզայից գտնված Դարեհ Ա-ի արձանը և այլն: Կարող ենք եզրակացնել, որ ինչպես յուրաքանչյուր սատրապություն, այնպես էլ Չայաստանը, Աքեմենյան պետության համար ունեցել է կենսական նշանակություն՝ կայսերական գաղափարախոսության տարածման ու ամրապնդման տեսանկյունից: Սատրապական Չայաստանը, լինելով Աքեմենյան պետության կենտրոնական և կարևոր հատվածներից մեկը, մեծ նշանակություն ուներ իր բնական ռեսուրսներով՝ մետաղներով (երկաթ, պղինձ, արծաթ) ու մետաղահանքերով, ձիերով ու ձիաբուծությամբ (ապադանայի բարձրաքանդակները վկայում են Չայաստանում ձիաբուծության զարգացման բարձր մակարդակի մասին և այն ձիերի մասին, որոնք բուծվում էին հատուկ պարսից արքայի համար): Ի վերջո, պետք չէ մոռանալ, որ Աքեմենյան տերության մայրամուտին Չայաստանի սատրապ էր եղել մեծ արքա Դարեհ 3-րդ Կողոմանոսը¹¹: Ասվածից պարզ է դառնում, որ թեև Դարեհ Ա-ն մշակել էր սատրապական համակարգի կառավարման ընդհանրական սկզբունքներ ու իրողություններ, սակայն յուրաքանչյուր երկիր ու ժողովուրդ ուներ իր ավանդույթները, ներքին կյանքի, կառավարման, տնտեսավարման սեփական առանձնահատկությունները: Ասվածը, հատկապես, իրողություն է Սատրապական Չայաստանի պարագայում, որը մինչև Աքեմենյան տերությանը ենթարկվելը և 13-րդ սատրապության մեջ ընդգրկվելը, իր հիմքում արդեն

«արքայից արքան» վերապահում էր բացառապես իրեն: Տե՛ս Дьяконов М. М., Очерк истории древнего Ирана, Москва, 1961, стр. 91-92.

¹⁰ Խորիկյան Չ., Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումների շուրջ, էջ 44:

¹¹ Դարեհը մինչև Աքեմենյան թագավոր դառնալը եղել է Չայաստանի սատրապ: Տե՛ս Марк Юниан Юстин. Эпитама сочинения Помпея Трога История Филиппа, пер. А. А. Деконского и М. И. Рижского. Санкт-Петербург, 2005, X, 3, 2-5.

իսկ ունենալ այնպիսի հզոր պետականության ավանդույթներ, որոնք գալիս էին ուրարտական դարաշրջանից: Յետևաբար, պարզ է դառնում, որ Յայկագուն-երվանդունիների ժամանակաշրջանի պետական ապարատին բնորոշ էին մի կողմից Ուրարտական թագավորության իրողությունները, մյուս կողմից՝ Աքեմենյան վարչակազմին բնորոշ առանձնահատկությունները: Այս համատեքստում էլ պետք է դիտարկել Սատրապական Յայաստանի կառավարման համակարգը: Սատրապական Յայաստանի ներքին կյանքի իրողությունները պարզաբանելու հարցում խիստ կարևոր են Յերոդոտոսի, Քսենոփոնի, Ստրաբոնի և մյուս պատմիչների տեղեկություններն այս ժամանակաշրջանի կառավարման համակարգի, վարչական բաժանման, զինված ուժերի, էթնիկ կազմի և այլ հարցերի մասին: Մեզ համար մեծ կարևորություն է ներկայացնում այն հարցը, թե ովքեր էին գլխավորում սատրապությունները, ինչ գործառույթներ էին կատարում սատրապները, ինչ լիազորություններ և սահմանափակումներ էին գործում նրանց համար: Առավել կարևոր սատրապությունների կառավարումը տրվում էր թագավորական ընտանիքի անդամներին, ընդ որում՝ սատրապների իշխանությունը ժամկետային սահմանափակում չուներ: Ինչ վերաբերում է Յայաստանին, սատրապներն այստեղ իշխում էին ժառանգաբար՝ արքայի կողմից վերահաստատվելու պայմանով: Նկատի ունենանք, որ ժառանգորդության կարգը բնորոշ է եղել Յայկագուն-երվանդունիներին նաև մարական տիրապետության ժամանակաշրջանում: Քսենոփոնի «Կյուրոպեդիա»-ից տեղեկանում ենք, որ մարական ու պարսկական ժամանակաշրջանում Յայաստանը վայելում էր լիակատար ներքին ինքնուրույնություն: Օրինակ՝ նշվում է, որ «արմենների հեծելազորը մոտ ութ հազար է, հետևակը՝ մոտ չորս բյուր...»¹²: Բնական է, որ սա տվյալ ժամանակաշրջանի համար բավականին մեծ թիվ էր ներկայացնում և ներքին ինքնավարություն չունեցող երկիրը այսպիսի պատկառելի քանակությամբ զորք չէր կարող ունենալ: Նաև տեղեկանում ենք երեք հազար տաղանդ արծաթի հասնող նյութական հարստության մասին¹³: Համաձայն Ստրաբոնի՝ Յայաստանի սատրապը Միթրա աստծո տոնակատարության կապակցությամբ պարսից արքային ուղարկում էր 20000 քուռակ¹⁴: Ըստ երևույթին, և՛ մարական, և՛ Աքեմենյան շրջանում, հայոց թագավոր-սատրապը եղել է և՛ հպատակ, և՛ դաշնակից: Յայաստանը՝ որպես հպատակ, մարական արքունիքն վճարում էր տարեկան տուրք, իսկ որպես դաշնակից արշավանքների ժամանակ տրամադրում էր պատկառելի քանակությամբ զորք՝ 4000 հեծե-

¹² Քսենոփոն, Կյուրոպեդիա, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 2000, III, 1, 33:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Страбон, География в 17 книгах, перевод, статья и комментарии Г. Стратановского, Ленинград, 1964, XI, 14, 9.

լազոր և 20000 հետևակ¹⁵: Նկատի ունենալով նաև այն, որ Տիգրան Երվանդյանը եղել է Կյուրոսի որսընկերը¹⁶, ապա դաշնակիցը՝ մարական տիրապետությունը տապալելու գործում, պարզ է դառնում, որ այդ ժամանակաշրջանում արմենները վայելել են քաղաքական որոշ ինքնուրույնություն: Փաստորեն, Աքեմենյան ժամանակաշրջանում ևս հայոց թագավորությունը չի կորցրել իր պետականությունը՝ ներքին ինքնուրույնության տեսանկյունից: Քսենոփոնի «Անաբասիս» աշխատությունը, որտեղ ներկայացված է Հայաստանի տարածքով 10 հազար հելլեն վարձկանների նահանջը դեպի Սև ծով, ապա՝ Հունաստան, մեզ համար կարևորվում է Արմենիայի սատրապի հիշատակումով: Երկում նշվում է, որ Արմենիան, «որին իշխում էր Օրոնտասը, մեծ էր ու հարուստ»¹⁷: Այս փաստը մի կողմից ցույց է տալիս, թե ով է իշխել այդ ժամանակ Հայաստանում, մյուս կողմից բացահայտում է մի շատ կարևոր իրողություն. Հայաստանն իրոք հարուստ երկիր էր, քանզի 10 հազարանոց նահանջող զորքը Հայաստանով անցնելիս առատորեն գտնում էր ամեն տեսակի բարիք: Սրանից հետևություն, որ Սատրապական Հայաստանն ունեցել է հաստատուն ինքնավարություն, քանզի միայն այս դեպքում է հնարավոր ապահովել տնտեսության զարգացման բարձր մակարդակ: Բավական է միայն նշել, որ Հայաստանը պարսից արքունիքին վճարում էր 400 տաղանդ արծաթ¹⁸ և 20000 քունակ: Իսկ այն, որ Հայաստանը բավականին հզոր էր և ի զորու դիմագրավել ցանկացած հարձակման, վկայում է Դարեհ Ա-ի Բեհիսթունյան արձանագրությունը, որտեղ նշվում է, որ Հայաստանում բռնկված ապստամբությունը Դարեհը կարողանում է ճնշել միայն հինգ ճակատամարտից հետո¹⁹: Մյուս կարևորագույն հարցը Սատրապական Հայաստանի վարչական բաժանումն էր: «Անաբասիս»-ում նշվում է, որ անցնելով Տիգրիս գետի ակունքը, հույները շարժվում են մինչև Տելեբոաս գետը, որի մոտակայքում շատ գյուղեր կային: Այս վայրը կոչվում է Արևմտյան Արմենիա, որի հյուպարքոսը Տիրիբագոսն էր²⁰: Վերջինս, ըստ տեղեկությունների, արքայի բարեկամն էր, և նրան էր վերապահվում թագավորին ձի նստեցնելու իրավունքը: Ելնելով Արևմտյան Հայաստանի²¹ մասին Քսենոփոնի տեղեկու-

¹⁵ Xenophon, Cyropaedia, with an English translation by Walter Miller, Vol. I, Cambridge-Massachusetts-London, 1960, III, I, 33-34, p. 240. Տե՛ս նաև Կրկյաշարյան Ս. Ս., Հին Հայաստանի պետական կառուցվածքը (մ.թ.ա. VI - մ. թ. IVդդ.), Երևան, 2005, էջ 28:

¹⁶ Քսենոփոն, Կյուրոպեդիա, III, 1, 7:

¹⁷ Քսենոփոն, Անաբասիս, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1970, III, 5, 17, IV, 3, 4:

¹⁸ Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, թարգմ. Ս.Կրկյաշարյանի, Երևան, 1986, III, 93:

¹⁹ Դարեհ Վշտասպի Բիսեթունյան արձանագրությունը, թարգմ. Գ. Ս. Նալբանդյանի, Երևան, 1964:

²⁰ Քսենոփոն, Անաբասիս, IV, 4 3:

²¹ Արևմտյան Հայաստանի սահմանների մասին տե՛ս Խորիկյան Հ., Սատրապական Հայաստանի պատմական աշխարհագրության մի քանի հարցեր ըստ «Անաբասիսի», - Մերձավոր Արևելք, VI, Երևան, 2009, էջ 94-95:

թյուններից՝ կարելի է ենթադրել նաև Արևելյան Հայաստանի գոյությունը, որի հյուսարքոսը թերևս Օրոնտասի հետ հիշատակված Արտուխասն էր²²: Քսենոփոնի տեղեկությունների մանրամասն վերլուծությունը թույլ է տալիս հաստատելու միասնական Հայաստանի գոյության փաստը, որտեղ Օրոնտեսը և՛ թագավոր էր, և՛ սատրապ: Մյուս եզրահանգումը, որ կարող ենք անել վերը նշվածից, այն է, որ Սատրապական Հայաստանում եղել է իշխանության տարանջատում, այսինքն՝ Օրոնտեսի կողքին կային հյուսարքոս Տիրիբագոսը, զորապետ Արտուխասը և գեղջավագները: Նույնը կարող ենք ասել Օրոնտասի և Միթրաուստեսի պարագայում, որոնք առաջնորդում էին հայկական զորքերը Գավգամելայի ճակատամարտում: Պետք է նշել, որ ի տարբերություն Ուրարտուի, որտեղ թագավորը և՛ աշխարհիկ, և՛ հոգևոր առաջնորդ էր, Սատրապական Հայաստանում թերևս գոյություն ուներ իշխանության տարանջատում: Մ. Խորենացին թագավոր Երվանդի կողքին հիշատակում է եղբորը՝ քրմապետ Երվազին²³:

Մեզ հետաքրքրող մյուս հարցը վերաբերում է սատրապների կալվածքներին: Նրանք խոշոր հողատերեր էին և տիրում էին բազմաթիվ կալվածքների: Որպես կանոն, յուրաքանչյուր սատրապի կալվածք տեղակայված էր սեփական սատրապության սահմաններում, սակայն հայտնի էին դեպքեր, երբ սատրապը այլ տարածքներում ևս ուներ հողային տիրույթներ²⁴: Եթե կայսրությունում այս երևույթը լայն տարածում ուներ, բնականաբար, Հայաստանում այն ևս առկա էր: Հավանաբար այդպիսի շրջան էր միջնադարյան աղբյուրների հիշատակած Արուանթունիք-Երուանդունիք գավառը՝ Վանա լճի մոտ²⁵: Այստեղ մեզ հետաքրքրում է այն փաստը, որ արքայական կամ սատրապական կալվածքները ունեցել են իրենց կառավարիչները: Տեղեկությունների համաձայն կառավարիչ-պաշտոնյաները հիմնականում տեղացի էին, որոնք պատասխանատու էին հարկերի հավաքագրման, հասարակական աշխատանքների կազմակերպման և այլ գործառույթների համար:

«Անաբասիս»-ում բերված տեղեկությունները թույլ են տալիս խոսել սատրապությունների՝ ավելի փոքր միավորների բաժանված լինելու իրողության մասին: «Այն գյուղը, ուր նրանք հասան, մեծ էր և ուներ ապարանք սատրապի

²² Նույն տեղում:

²³ Խորենացի Մ., Հայոց պատմություն, Երևան, 1997, Գիրք II, էջ 158:

²⁴ Тирацян Г. А., Некоторые аспекты внутренней организации армянской сатрапии, ՊԲՀ, 1966, թիվ 2, էջ 91-92:

²⁵ Ս. Երեմյանը ենթադրում է, որ Արուանթունիք-Երուանդունիք գավառի անվանումը սկզբում տարածվում էր Ուրարտական մայրաքաղաք Տուշպայի ամբողջ շրջակայքի վրա: Տե՛ս Երեմյան Ս. Ս., Հայկական առաջին պետական կազմավորումները (մ.թ.ա. VII-VI դդ.), ՊԲՀ, 1963, թիվ 3, էջ 107:

համար, իսկ տների մեծագույն մասի վրա կային աշտարակներ»²⁶: Ասվածից երևում է, որ սատրապությունները կազմված էին ավելի մանր վարչական միավորներից՝ սկսած գյուղերից: Քսենոփոնի մոտ հայկական գյուղերի մասին բազմաթիվ հիշատակություններ կան, որոնք վկայում էին, որ գյուղերը առատ էին ամեն տեսակի ապրանքներով²⁷: Ընդ որում, յուրաքանչյուր գյուղ ուներ գեղջավազ՝ գյուղապետ²⁸: Մեզ համար առանձնահատուկ կարևորություն է ներկայացնում սատրապական արքունիքը: Տվյալները փաստում են, որ այն կրկնում էր արքայական արքունիքը, և ըստ երևույթին, պալատական ավանդույթները համընկնում էին: Ըստ Քսենոփոնի, երբ հույները գրավեցին Տիրիբագոսի վրանը, այնտեղ գտան «արծաթե ոտքերով մահիճներ և ընպանակներ, ինչպես նաև մարդիկ, որոնք ասացին, թե հացարարներ և մատռավակներ էին»²⁹: Պետք է նկատի ունենալ, որ մատռվակը ամենաբարձր պաշտոններից էր: Նրան և հազարապետին վստահված էր թագավորի անվտանգությունը: Ընդ որում, վերը հիշատակված մատռվակները, ըստ երևույթին, եղել են սովորական ծառայողներ, իսկ գլխավոր մատռվակը թագավորի խորհրդականներից էր: Եվ բնական է, որ «Արևմտյան Չայաստանի» կառավարիչ Տիրիբագոսը, լինելով բարձրաստիճան պաշտոնյա և ախոռապետ, ուներ իր արքունիքը՝ պալատական ծառայողներով և պետական պաշտոնյաներով³⁰: Կարելի է նաև ենթադրել, որ այդ մատռվակներն ու հացարարները եղել են ստրուկներ, որոնք օգտագործվել են տնային, գյուղատնտեսական և շինարարական աշխատանքներում: Համադրելով ուրարտական թագավորության և Աքեմենյան Պարսկաստանի պետական կարգի մասին տվյալները՝ կարող ենք եզրակացնել, որ Սատրապական Չայաստանում եղել են արքունական այլ ծառայողներ, ինչպիսիք են՝ հացթուխներ, խոհարարներ, ներքինիներ, հովիվներ, զարեջրագործներ, ինչպես նաև արտոնյալ վիճակում գտնվող բժիշկներ, նկարիչներ, արհեստավորներ: Ինչ վերաբերում է Սատրապական Չայաստանի ռազմական կազմակերպությանը, ապա այստեղ ևս օգնության են գալիս Աքեմենյան Իրանի բանակի մասին պահպանված տվյալները: Հայտնի է, որ պատերազմների ժամանակ Աքեմենյան բանակը հավաքագրվել և կազմվել է էթնիկական սկզբունքով: Այս սկզբունքը գործում էր և՛ Կունաքսայի, և՛ Գավգամելայի ճակատամարտերի պարագայում: Թագավորական զորքը բաժանված էր ըստ ժողովուրդների, և ինչպես նկատում է Քսենոփոնը, պարսկական զորքերը «առաջ էին շարժվում բա-

²⁶ Քսենոփոն, Անաբասիս, IV, 4, 2:

²⁷ Նույն տեղում, IV, 4, 7, IV, 4, 25-27:

²⁸ Նույն տեղում, IV, 4, 28:

²⁹ Նույն տեղում, IV, 4, 21

³⁰ Тирациян Г., Некоторые аспекты внутр. организации армянской сатрапии, с. 106.

Ժանված ըստ ազգությունների»³¹: Պարզ էր, որ հայոց զորքը ևս հանդես էր գալիս որպես առանձին էթնիկական խումբ: Այստեղ հատկապես կարևորվում է Քսենոփոնի հետևյալ տեղեկությունը. «Լուսաբացին գետի այն կողմը նրանք նկատեցին սպառազինված հեծյալների, որոնք պատրաստ էին խոչընդոտելու գետանցը, իսկ հեծյալներից վերև, բլուրների վրա շարվել էին հետևակ զորքեր, որոնք պետք է արգելեին հելլեններին Արմենիա դուրս գալ: Սրանք Օրոնտասի և Արտուխասի արմեններն էին և մարդերն ու խալոյաները վարձկան»³²: Ըստ այդմ, պարզ է դառնում, որ յուրաքանչյուր սատրապություն, այդ թվում՝ Հայաստանը, ուներ կանոնավոր զորամասեր, որոնք լինելով մշտական ռազմական ծառայության մեջ, ոչ միայն պաշտպանում էին սատրապության սահմանները հնարավոր արշավանքներից, այլև, տեղավորված լինելով բերդերում ու ամրոցներում, հետևում էին կարգուկանոնի պահպանմանը: Սատրապական Հայաստանի ներքին կյանքի կազմակերպման մյուս լրջագույն տարրը պետական գրագրության առկայությունն էր: Անառարկելի է, որ սատրապական վարչակազմերը ունեին հաշվապահներ, գրագիրներ, քանզի առանց այդ պաշտոնյաների անհնար էր կապվել կայսրության կենտրոնի հետ և կարգավորել ներքին կյանքի տարաբնույթ հարցեր: Մյուս կողմից՝ Աքեմենյան կայսրության համար ևս էական նշանակություն ուներ սատրապությունների միջև ընդհանուր հաղորդակցման համակարգի ստեղծումը: Թեև կայսրությունը կազմված էր տարալեզու և տարաբարբառ ազգերից ու ցեղերից, սակայն առանց ընդհանուր վարչական լեզվի կայսրության կենտրոնացված կառավարման մասին խոսք լինել չէր կարող: Միավորման և պետական գրագրությունը կազմակերպելու լավագույն տարբերակը դարձավ արամեերենը³³, ընդ որում, այն ոչ թե հասանելի դարձավ հասարակության բոլոր խավերին, այլ մնաց որպես հաղորդակցության լեզու ինչպես արքայական արքունիքի և սատրապությունների, այնպես էլ հենց իրենց՝ սատրապությունների միջև: Այն, որ սատրապական Հայաստանում եղել է դպրատուն, հաստատվում է Հայաստանի սատրապ Օրոնտեսի նամակից՝ ուղարկված պարսից սատրապ Պակեստին: Այս նամակը թույլ է տալիս խոսելու դպրատան առկայության մասին՝ իր գրագրով և այլ ծառայողական անձնակազմով:

³¹ Քսենոփոն, Անաբասիս, I, 8, 9:

³² Նույն տեղում, IV, 3, 3-4:

³³ Тирациян Г. А., Некоторые аспекты внутр. организации армянской сатрапии, стр.108.

ԱՆԻ ՆԱՅԱՊԵՏՅԱՆ

Սատրապական Հայաստանի կառավարման ներքին համակարգը

Բանալի բառեր. սատրապական Հայաստան, կառավարման ներքին համակարգ, տնտեսական զարգացվածություն, ներքին ինքնուրույնություն

Սատրապական Հայաստանը, լինելով Աքեմենյանների տիրապետության տակ, վայելում էր լիակատար ներքին ինքնուրույնություն՝ պահպանելով իր պետական գործառույթները՝ ազգային կյանքի բոլոր ոլորտներում: Քաղաքական ներքին լայն ինքնավարության ապացույցն էր երկրի առաջնորդը՝ թագավոր-սատրապը՝ վարչական բաժանման, պատկառելի բանակի, սոցիալ-տնտեսական հարաբերությունների և մշակութային իրողությունների առկայությամբ: Եվ, չնայած Աքեմենյանների հնարավոր քաղաքական, գաղափարական ու մշակութային ազդեցություններին, հայկական մշակույթը կարողացել է պահպանել էթնիկ ուղղվածությունը, իր ինքնությունն ու զարգացման ներքին միտումները:

Ани НАГАПЕТЯН

Внутренняя система управления Армянской Сатрапии

Ключевые слова: Сатрапская Армения, внутренняя система управления, экономическое развитие, внутренняя автономия (независимость)

Сатрапия Армения, находящаяся под контролем империи Ахеменидов, использовала всю внутреннюю автономию, сохраняя все свои правительственные функции во всех сферах национальной жизни. Глава страны, то есть Царь-сатрап был доказательством политической внутренней автономии и был ответственен за административное деление, благородной армии, социально-экономические отношения и культурные события. И несмотря на возможное политическое, идеологическое и культурное влияние Ахеменидов, армянская культура сумела сохранить этническую ориентацию, свою автономию и внутренние тенденции в развитии.

Ani NAHAPETYAN

Inner governing system of Satrapy of Armenia

Key words: Satrapy of Armenia, inner system of governing, economic development, inner autonomy (independence)

The Satrapy of Armenia, being under the control of Achaemenid Empire, presumed entire inner autonomy keeping all its governmental functions in all spheres of national life. The country's leadership, i.e. king-satrap was the proof of the political inner wide autonomy, and was responsible for the administrative division, the honorable army, social-economic relations and cultural events. And despite Achaemenid possible political, ideological and cultural influences, the Armenian culture has managed to maintain ethnic orientation, its autonomy and internal trends in development.